Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

# ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 05-03-2022 թ. որոշմամբ**
**«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ Դավիթ Անհաղթի 10 1 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.00223 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2003-11-13 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 01002296 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)93555993 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | www.ufar.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | leyli.melikyan@gmail.com |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| Ֆրանսիայի Հայաստանի կառավարություն | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Բերտրան Վենար | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 240 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | Կրթական | 108,594,000 |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Կրթական | 47,587,000 |
| | Կրթական | 41,139,000 |
| | Կրթական | 6,423,000 |
| | Կրթական | 68,650,000 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Կրթական | 1,178,421,100 |

Digitally signed by
MELIKYAN LEYLI
6410500130
Date: 2023.06.29
10:45:52 AMT

| | | |
|---|---|---|
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 0 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Կրթական | 821,480,040 | |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 999,391,726 | |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 821,480,040 | |

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 43 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ______________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

# Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

# «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2021թ.

# Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Հոգաբարձուների խորհուրդ | 6 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 7 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն | 9 |
| Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն | 10 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 11 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն) | 12 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 13 |

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

**Grant Thornton CJSC**
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

| | |
|---|---|
| Արմեն Հովհաննիսյան | Լիլիթ Արաբաջյան, FCCA |
| Տնօրեն | Առաջադրանքի պատասխանատու |

31 մարտի 2022թ.

# Հոգաբարձուների խորհուրդ

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը ղեկավարում է Հիմնադրամի գործունեությունը՝ կանոնադրության և գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Խորհուրդը կազմված է տասը անդամից, որոնք հանդիսանում են ստորև նշված հաստատությունների, գերատեսչությունների և ինստիտուտների ներկայացուցիչները: Հոգաբարձուների խորհրդի ցանկը ներկայացված է ստորև.

- Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանի,
- ՀՀ կառավարությունը՝ ի դեմս արտաքին գործերի նախարարի,
- ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի,
- Ֆրանսիայի Հանրապետության բարձրագույն կրթության ու գիտության և նորարարության նախարարության մեկ ներկայացուցիչ,
- Ժան Մուլեն Լիոն III համալսարանի մեկ ներկայացուցիչ,
- Հայկական բարեգործական ընդհանուր միություն – Հայաստանի մեկ ներկայացուցիչ,
- Ալեքսի Գովջյան,
- Հակոբ Անդրեասյան,
- Վարուժան Ավետիքյան,
- Վիգեն Բադալյան:

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| *Ակտիվներ* | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 694,823 | 523,836 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 31,993 | 28,872 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | | 3,000 | 3,000 |
| | | 729,816 | 555,708 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 6 | 85,017 | 48,276 |
| Ժամկետային ավանդներ | 7 | 108,522 | 256,444 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 8 | 31,561 | 73,200 |
| | | 225,100 | 377,920 |
| Ընդամենը ակտիվներ | | 954,916 | 933,628 |

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

| *Հազար դրամ* | Ծանոթ. | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Ֆինանսական վարձակալության պայմանագրի գծով պարտավորություններ | 9 | 6,677 | 8,387 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 10 | 34,930 | 38,245 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 11 | 72,475 | 40,770 |
| | | 114,082 | 87,402 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Ֆինանսական վարձակալության պայմանագրի գծով պարտավորություններ | 9 | 1,700 | 1,513 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 12 | 195,552 | 218,407 |
| Հետաձգված եկամուտ | 13 | 170,548 | 201,149 |
| Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն | | 13,897 | 12,005 |
| | | 381,697 | 433,074 |
| *Զուտ ակտիվներ* | | | |
| Կուտակված արդյունք | | 236,411 | 160,952 |
| Վերագնահատման պահուստ | 14 | 222,726 | 252,200 |
| | | 459,137 | 413,152 |
| Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ | | 954,916 | 933,628 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. մարտի 31-ին:

| | |
|---|---|
| Բերտրան Վենար | Լեյլի Մելիքյան |
| Ռեկտոր | Գլխավոր հաշվապահ |

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ կրթական ծառայություններից | 15 | 1,271,300 | 998,801 |
| Շնորհներից եկամուտ | | 40,998 | 68,149 |
| Այլ եկամուտ | | 1,563 | 9,881 |
| | | 1,313,861 | 1,076,831 |
| Փոխհատուցումներ աշխատակիցներին | | (732,170) | (594,819) |
| Մաշվածություն, ամորտիզացիա և վերանորոգում | | (170,787) | (100,991) |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | | (38,502) | (20,313) |
| Կոմունալ ծառայություններ և գրասենյակային այլ ծախսեր | | (56,715) | (37,297) |
| Պատճենահանում, տպագրություն և հրատարակչություն | | (16,228) | (12,242) |
| Այլ ծախսեր | 16 | (212,288) | (223,594) |
| Գործառնական գործունեությունից արդյունք | | 87,171 | 87,575 |
| Ֆինանսական ծախս | | (1,187) | (126) |
| Ֆինանսական եկամուտ | | 2,112 | 613 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից (վնաս)/օգուտ, զուտ | 17 | (11,887) | 11,937 |
| Արդյունք մինչև հարկերը | | 76,209 | 99,999 |
| Շահութահարկի գծով ծախս | 18 | (30,224) | (15,317) |
| Տարվա արդյունք | | 45,985 | 84,682 |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | | 45,985 | 84,682 |

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Կուտակված արդյունք | Վերագնա-հատման պահուստ | Ընդամենը |
|---|---|---|---|
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 76,270 | 252,200 | 328,470 |
| Տարվա արդյունք | 84,682 | - | 84,682 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | 84,682 | - | 84,682 |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 160,952 | 252,200 | 413,152 |
| Տարվա արդյունք | 45,985 | - | 45,985 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | 45,985 | - | 45,985 |
| Վերագնահատման պահուստի փոխանցում կուտակված արդյունքին | 29,474 | (29,474) | - |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 236,411 | 222,726 | 459,137 |

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

| *Հազար դրամ* | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Տարվա արդյունք | 45,985 | 84,682 |
| *Ճշգրտումներ՝* | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 111,739 | 57,791 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 2,518 | 1,178 |
| Շահութահարկի գծով ծախս | 30,224 | 15,317 |
| Ֆինանսական եկամուտ | (2,112) | (487) |
| Ֆինանսական ծախս | 1,187 | - |
| Փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ) | 11,887 | (11,937) |
| *Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները* | 201,428 | 146,544 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | (36,741) | (12,874) |
| Հետաձգված եկամտի փոփոխություն | (30,601) | 115,198 |
| Ակտիվներին վերաբերող շնորհի փոփոխություն | 31,705 | 7,546 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն | 974 | 150,370 |
| *Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ* | 166,765 | 406,784 |
| Վճարված շահութահարկ | (24,765) | (17,720) |
| Վճարված տոկոսներ | (1,187) | - |
| *Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ* | 140,813 | 389,064 |

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Ներդրումներ դուստր ընկերությունում | - | (1,500) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (288,365) | (155,880) |
| Ավանդների վերադարձ/(ներդնում) | 111,643 | (223,840) |
| Ստացված տոկոսային եկամուտ | 2,112 | 487 |
| *Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | (174,610) | (380,733) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Ֆինանսական վարձակալության պայմանագրի պարտավորության մարում | (1,523) | - |
| *Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ* | (1,523) | - |
| Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ (նվազում)/աճ | (35,320) | 8,331 |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | (6,319) | 11,340 |
| Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում | 73,200 | 53,529 |
| Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում | 31,561 | 73,200 |

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանում ֆրանսիական Համալսարան» Հիմնադրամը (Հիմնադրամ) ստեղծվել է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարության 2003թ. հուլիսի 10-ի թիվ 861-Ա որոշման, ՀՀ և Ֆրանսիայի Հանրապետության կողմից: Համաձայն նշված որոշման՝ ՀՀ անունից հանդես գալու իրավասությունները վերապահվել են ՀՀ արտաքին գործերի և ՀՀ կրթության և գիտության նախարարություններին (ներկայումս՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն), իսկ Ֆրանսիայի Հանրապետության անունից հանդես գալու իրավասությունները վերապահվել են ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատանը: Հիմնադրամը գրանցվել է ՀՀ պետական ռեգիստրում 2003թ. նոյեմբերի 13-ին:

Հիմնադրամի գործունեության հիմնական տեսակներն են.

- բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում, բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի,
- գրադարանային գործունեություն:

Համալսարանի գործունեության նպատակն է ապահովել բարենպաստ պայմաններ Համալսարանի՝ բարձրագույն կրթության և ուսանողական ծրագրերի ինստիտուտի զարգացման իրագործման հարցում, որը հիմնված կլինի եվրոպական և միջազգային չափանիշներին համապատասխանող ֆրանսիական համալսարանների և ֆրանսիական «Բարձրագույն դպրոցների մոդելի» վրա՝ հնարավորություն ընձեռելով Համալսարանին հանդես գալ որպես տարածաշրջանային կրթական կենտրոն:

Հայաստանում ֆրանսիական համալսարանը, Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի և Թուլուզ 3 Պոլ Սաբատիե համալսարանի հետ համագործակցության շնորհիվ, միաժամանակ շնորհում է հայկական և ֆրանսիական պետական դիպլոմներ.

- հայկական Բակալավրի և ֆրանսիական Լիսանսի
- հայկական Մագիստրոսի և ֆրանսիական Մաստերի

Համալսարանում գործում են հետևյալ ֆակուլտետները.

- իրավաբանական ֆակուլտետ, որը պատրաստում է ապագա իրավաբաններ ձեռնարկության, դատական, վարչական և միջազգային իրավունքի բնագավառներում,
- կառավարման ֆակուլտետ, որի նպատակն է ապահովել բարձրագույն կրթություն մենեջմենթի, հաշվապահության և ֆինանսական կառավարման բնագավառներում,
- առևտրի և մարքեթինգի ֆակուլտետ, որն առաջարկում է բարձրագույն կրթություն առևտրային գործունեության և մարքեթինգի բնագավառներում,
- ֆինանսների ֆակուլտետ, որը մասնագետներ է պատրաստում ֆինանսների, բանկային գործի և ապահովագրության ոլորտներում,

- ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, որը մասնագետներ է պատրաստում ծրագրավորման, համակարգչային ճարտարապետության և տվյալների վերլուծության բնագավառում: Այս ֆակուլտետը բացվել է 2018թ.-ին:

Համաձայն 2020թ. հուլիսի 27-ին կնքված պայմանագրի՝ Հիմնադրամը ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ միասին իրականացում է համակարգչային գիտության ու ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում գիտահետազոտական, կրթական և նորարարական կիրառություններին ուղղված համատեղ գործունեություն: Այս պայմանագրի շրջանակներում կողմերը նախատեսում են իրականացնել համատեղ գիտական հետազոտություններ և նախագծեր, պատրաստել կիրառական և նորարարական ունակություններ ունեցող երիտասարդ մասնագետներ, զարգացնել հայ–ֆրանսիական գիտաուսումնական կապերը:

Ծրագիրը իրականացնելու համար Հիմնադրամը ներդնում է շենքի համատեղ օգտագործման տարածքի ընթացիկ վերանորոգման, ռեսուրսների ընթացիկ պահպանման և սպասարկման համար պահանջվող միջոցներ, համատեղ գիտակրթական գործունեության զալիք ժամանակաշրջանի համար նախատեսվող ծախսերի հատուցման ռեզերվային անդամակցության վճար, իսկ ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը ՝ համակարգչային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ուղղությամբ տեսական և կիրառական հետազոտությունների գծով իր գիտական ներուժը, առկա գիտահետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքների ռեսուրսները, այդ թվում ցանցային, հաշվողական և տվյալների միջավայրերի ռեսուրսները և ծառայությունները, լսարանային սենյակները և դահլիճները, գրադարանը ինչպես նաև շենքի ընդհանուր օգտագործման տարածքներ:

Վերոնշյալ պայմանագիրը գործում է մինչև 2027թ.:

Հիմնադրամի աշխատակիցների և ուսանողների տարեկան միջին ցուցակային թիվը ներկայացված է ստորև.

| | 2021թ. | 2020թ. |
|---|---:|---:|
| Ուսանողներ | 1,564 | 1,303 |
| Դասախոսական անձնակազմ | 168 | 141 |
| Վարչական ապարատ | 53 | 63 |

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի 10:

# 2 Պատրաստման հիմքերը

## 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

## 2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով և որոշ

ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

## 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

## 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

**Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

| Ստանդարտ | Ստանդարտի կամ մեկնաբանության անունը |
|---|---|
| *Տարբեր* | *Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 4, ՖՀՄՍ 7 փոփոխություններ)* |

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ

գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

| Ստանդարտ | Ստանդարտի կամ մեկնաբանության անունը | Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի |
|---|---|---|
| *ՖՀՄՍ 3* | *Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)* | *1 հունվարի 2022թ.* |
| *ՀՀՄՍ 16* | *Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)* | *1 հունվարի 2022թ.* |
| *ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 16* | *2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)* | *1 հունվարի 2022թ.* |
| *ՖՀՄՍ 4* | *ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)* | *1 հունվարի 2023թ.* |
| *ՀՀՄՍ 1* | *Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)* | *1 հունվարի 2023թ.* |
| *ՀՀՄՍ 12* | *Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)* | *1 հունվարի 2023թ.* |

# 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

## 3.1 Համատեղ գործունեություն

Համատեղ գործունեությունը համատեղ պայմանավորվածություն է, համաձայն որի՝ պայմանավորվածության նկատմամբ համատեղ վերահսկողություն ունեցող կողմերը պայմանավորվածությանը վերաբերող ակտիվների նկատմամբ ունեն իրավունքներ, իսկ պարտավորությունների գծով՝ պարտականություններ: Այդպիսի կողմերը կոչվում են համատեղ գործողներ:

Հիմնադրամը համատեղ գործունեությունում իր մասնակցության հետ կապված, ճանաչում է.

ա) իր ակտիվները՝ ներառյալ համատեղ պահվող ակտիվների իր բաժինը,

բ) իր պարտավորությունները՝ ներառյալ համատեղ ստանձնած պարտավորությունների իր բաժինը,

գ) համատեղ գործունեությունից ստացվող արտադրանքի իր բաժնի վաճառքից հասույթը,

դ) համատեղ գործունեության արդյունքի վաճառքից հասույթի իր բաժինը,

ե) իր ծախսերը՝ ներառյալ համատեղ կրած ծախսերի իր բաժինը:

Հիմնադրամը համատեղ գործունեությունում իր մասնակցությանը վերաբերող ակտիվները, պարտավորությունները, հասույթները և ծախսերը հաշվառում է այն ՖՀՄՍ-ներին համապատասխան, որոնք կիրառելի են այդ ակտիվների, պարտավորությունների, հասույթների և ծախսերի նկատմամբ:

## 3.2 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

## 3.3 Հիմնական միջոցներ

Շենքերը, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված արդյունքում Հիմնադրամի կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված արդյունքում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական

արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված արդյունքին:

Մնացած հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | | |
|---|---|---|
| Շենքեր և շինություններ | - | 20 տարի |
| Մեքենաներ, սարքավորումներ | - | 5 տարի |
| Գրքեր | - | 5 տարի |
| Արտադրական, տնտեսական գույք | - | 5 տարի |
| Համակարգչային տեխնիկա | - | 2-5 տարի: |

## 3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 5-10 տարի համակարգչային ծրագրերի համար:

## 3.5 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

## 3.6 Վարձակալված ակտիվներ

*Հիմնադրամը որպես վարձակալ*

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Հիմնադրամը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Հիմնադրամին,
- Հիմնադրամն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Հիմնադրամն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Հիմնադրամն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

*Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ*

Հիմնադրամը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

## 3.7 Ֆինանսական գործիքներ

*Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

*Ֆինանսական ակտիվների դասակարգումը  և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

*Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

*Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, ժամկետային ավանդները և առևտրային դեբիտորական պարտքերը:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, ժամկետային ավանդները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը  դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

*Առևտրային դեբիտորական պարտքեր*

Հիմնադրամը հաշվառում է առևտրային դեբիտորական պարտքերը՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Հիմնադրամը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

*Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը*

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, որոնք ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

*Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

*Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները*

Վարձակալության գծով պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են վարձակալական վճարների ներկա արժեքով, որոնք դեռ չեն վճարվել մեկնարկի ամսաթվին, զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրին ներհատուկ տոկոսադրույքով կամ, եթե այդ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Հիմնադրամի հավելյալ վարկավորման լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով: Վարձակալական վճարները ներառում են ֆիքսված վճարները, փոփոխուն վճարները, որոնք կախված են ինդեքսներից և փոխարժեքներից, մնացորդային արժեքի սահմանված երաշխավորություններով վճարվելիք գումարները, գնման հնարավորությամբ նախատեսված գինը, որը Հիմնադրամը ողջամտորեն վստահ է, որ կիրառելու է:

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալության գծով պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը հետևյալ կերպ.

- վարձակալության գծով պարտավորությունների տոկոսներն արտացոլելու համար ավելացնելով հաշվեկշռային արժեքը,
- կատարված վարձակալական վճարներն արտացոլելու համար նվազեցնելով հաշվեկշռային արժեքը,
- վերագնահատումները և վարձակալության ձևափոխումները կամ ըստ էության վերանայված ֆիքսված վարձակալական վճարներն արտացոլելու համար վերաչափելով հաշվեկշռային արժեքը:

## 3.8 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

## 3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական արդյունքի, ո՛չ էլ հարկվող արդյունքի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

## 3.10 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

*Վճարովի բացակայություններ*

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

*Պարգևավճարներ*

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

## 3.11 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում կրթական ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Հիմնադրամը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ: Նման ձևով, եթե Հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով` հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրված ցանկացած զեղչերը և իջեցումների գումարները:

*Հասույթ կրթական ծառայություններից*

Ուսման վճարների գծով հասույթը ճանաչվում է գծային մեթոդով՝ ուսումնական փուլի համապատասխան ժամկետի ընթացքում: Ուսումնական տարվա համար նախատեսված վճարը հասույթ է ճանաչվում երկու փուլով՝ համամասնորեն ըստ համապատասխան կիսամյակների: Առաջին ուսումնական կիսամյակի ուսման վճարի մասը ճանաչվում է հասույթ ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքում: Ընթացիկ տարվա երկրորդ ուսումնական կիսամյակի համար ստացված ուսման վճարը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ ուսման վճարների գծով:

*Այլ հասույթ*

Ընդունելության դիմումների հավաքագրման ժամանակ գանձվող գումարները ճանաչվում են եկամուտ այն ժամանակաշրջանում, երբ ընդունվում են դիմումները:

Քննությունների կազմակերպումից և անցկացումից հասույթը ճանաչվում է քննությունների անցկացման օրը:

*Տոկոսներից եկամուտ*

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

*Վարձակալական եկամուտ*

Գործառնական վարձակալության պայմանագրերից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում, երբ համապատասխան հաշիվները յուրաքանչյուր ամիս դուրս են գրվում:

*Շնորհներից, նվիրատվություններից և հանգանակություններից եկամուտ*

Շնորհներից, նվիրատվություններից և հանգանակություններից եկամուտը ճանաչվում է, երբ հավանական է, որ դրանք կստացվեն և եկամտի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հիմնադրի կողմից հատկացվող միջոցները ճանաչվում են որպես եկամուտ, երբ դրանք դառնում են ստացման ենթակա, բացառությամբ այն դեպքերի, երբ միջոցները տրամադրվում են որոշակի պայմաններով, այս դեպքում ստացված միջոցները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

# 4 Հիմնական միջոցներ

| Հազար դրամ | Շենքեր և շինություն-ներ | Համակարգ-չային տեխնիկա, տնտեսական և արտադրական գույք | Գրքեր և այլն | Տրանսպորտային միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական կամ վերագնահատված արժեք* | | | | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 421,257 | 379,744 | 96,499 | | 897,500 |
| Ավելացում | 54,836 | 93,189 | 5,049 | 11,000 | 164,074 |
| Օտարում | - | (33,773) | (824) | - | (34,597) |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 476,093 | 439,160 | 100,724 | 11,000 | 1,026,977 |
| Ավելացում | 154,397 | 120,970 | 5,469 | - | 280,836 |
| Օտարում | - | (18,357) | (1,020) | - | (19,377) |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 630,490 | 541,773 | 105,173 | 11,000 | 1,288,436 |
| *Կուտակված մաշվածություն* | | | | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 60,086 | 339,714 | 82,959 | - | 482,759 |
| Տարվա հաշվարկ | 20,751 | 29,123 | 3,721 | 206 | 53,801 |
| Օտարման հետևանքով դուրսգրում | - | (32,997) | (422) | - | (33,419) |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 80,837 | 335,840 | 86,258 | 206 | 503,141 |
| Տարվա հաշվարկ | 25,577 | 76,434 | 3,120 | 2,200 | 107,331 |
| Օտարման հետևանքով դուրսգրում | - | (16,249) | (610) | - | (16,859) |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 106,414 | 396,025 | 88,768 | 2,406 | 593,613 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 395,256 | 103,320 | 14,466 | 10,794 | 523,836 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 524,076 | 145,748 | 16,405 | 8,594 | 694,823 |

Հիմնադրամի հիմնական միջոցների «Շենքեր և շինություններ» դասում հաշվառվում է ք. Երևան, Դավիթ Անհաղթի 10 հասցեի առաջին հարկում գտնվող կոնֆերանս դահլիճի տարածքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշված շինությունը չունի պետական գրանցում: Այս տարածքի ձեռք բերման համար Հիմնադրամը «Սթրոք» Եվրոպական բժշկական կենտրոն ՍՊԸ-ին վճարել էր 28,200 հազար դրամ՝ համաձայն 2009թ. օգոստոսի 1-ին Հիմնադրամի և «Սթրոք» Եվրոպական բժշկական կենտրոն ՍՊԸ-ի միջև կնքված

պայմանագրի: Վերը նշված պայմանագիրը անվավեր ճանաչելու վերաբերյալ «Սթրոք» Եվրոպական բժշկական կենտրոն ՍՊԸ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան: Դատաքննությունը դեռևս ընթացքի մեջ է:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը 369,242 հազար դրամ է (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 321,177 հազար դրամ):

Շենքերի և շինությունների՝ տարվա ընթացքում ավելացումները ներառում են դահլիճի, գրադարանի և լսարանների կառուցման և վերանորոգման ծախսումները:

Հիմնական միջոցների դուրսգրումներն իրենցից ներկայացնում են հիմնականում աթոռների, սեղանների և տեխնիկայի դուրսգրումները:

*Հիմնական միջոցների վերագնահատում*

Հիմնադրամի շենքերը վերջին անգամ վերագնահատվել են լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից 2016թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ: Շուկայական արժեքը որոշվել է ծախսային և եկամուտների ուղղակի կապիտալավերածման մեթոդների հիման վրա (տե՛ս ծանոթագրություն 23): Ղեկավարության գնահատմամբ՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Եթե շենքերը ներկայացված լինեին սկզբնական արժեքով, ապա հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքը կկազմեր 224,637 հազար դրամ (2020թ. 96,976 հազար դրամ):

## 5 Ոչ նյութական ակտիվներ

| *Հազար դրամ* | Համա-կարգչային ծրագրեր | Գրքերի մշակման ծախսեր | Ընդամենը |
|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 15,176 | 23,797 | 38,973 |
| Ավելացում | 1,706 | - | 1,706 |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 16,882 | 23,797 | 40,679 |
| Ավելացում | 7,529 | - | 7,529 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 24,411 | 23,797 | 48,208 |
| *Կուտակված ամորտիզացիա* | | | |
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 5,351 | 2,466 | 7,817 |
| Տարվա հաշվարկ | 1,614 | 2,376 | 3,990 |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,965 | 4,842 | 11,807 |
| Տարվա հաշվարկ | 2,032 | 2,376 | 4,408 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 8,997 | 7,218 | 16,215 |

| | | | |
|---|---|---|---|
| *Հաշվեկշռային արժեք* | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 9,917 | 18,955 | 28,872 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 15,414 | 16,579 | 31,993 |

Գրքերի մշակման ծախսերն իրենցից ներկայացնում են «Մերկատոր – մարքետինգի տեսություն և պրակտիկա» գրքի հայերեն տարբերակի թարգմանչության, խմբագրման և այլ ծախսեր: Սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ գիրքը պատրաստ է տպագրության և որպես դասագիրք վաճառքի համար՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով այն երաշխավորվել է որպես դասագիրք բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների համար:

Համակարգչային ծրագրերի ավելացումները հիմնականում ներառում են բրենդբուքի և Հիմնադրամի ռեսուրսների ավտոմատ կառավարման համակարգի տեխնիկական պայմանների մշակման ծախսերը:

## 6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | |
| Դեբիտորական պարտքեր ուսման վարձերի գծով | 65,624 | 65,042 |
| Դեբիտորական պարտքեր շնորհների գծով | 14,301 | 7,798 |
| Այլ առևտրային դեբիտորական պարտքեր | - | 2,499 |
| Կանխատեսվող պարտքային կորուստների գծով պահուստ | (33,849) | (33,849) |
| | 46,076 | 41,490 |
| *Ոչ ֆինանսական ակտիվներ* | | |
| Տրված կանխավճարներ | 38,941 | 6,786 |
| | 85,017 | 48,276 |

Տրված կանխավճարները ներառում են «Սմարթսոֆթ» ՍՊԸ-ին տրված գումարը՝ համալսարանի ուսումնական գործընթացների ավտոմատ կառավարման համակարգի մշակման և ներդրման համար:

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Կանխատեսվող պարտքային կորուստների գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 33,849 | 7,158 |
| Տարվա ընթացքում պահուստի աճ | - | 26,691 |
| Տարեվերջի մնացորդ | 33,849 | 33,849 |

Ուսման վարձերի գծով դեբիտորական պարտքերի համար տոկոսներ չեն հաշվարկվում:

22 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային կորստի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը հայկական դրամով են:

## 7 Ժամկետային ավանդներ

Ավանդը ներդրվել է «ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ» բանկում մինչև 2022թ. հուլիսի 3-ը 0.75% տարեկան տոկոսադրույքով:

Տե՛ս ծանոթագրություն 22 (ա)՝ ժամկետային ավանդների արժույթների բացահայտման համար:

## 8 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Բանկային հաշիվներ | 31,117 | 73,196 |
| Կանխիկ միջոցներ | 444 | 4 |
| | 31,561 | 73,200 |

Տե՛ս ծանոթագրություն 22՝ դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

## 9 Ֆինանսական վարձակալության պայմանագրի գծով պարտավորություններ

Հիմնադրամը 2020թ.-ի ընթացքում «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի հետ կնքած պայմանագրի շրջանակներում ձեռք է բերել Renault Arkana մակնիշի ավտոմեքենա: Համաձայն պայմանագրի գույքի համար վճարման ժամկետը սահմանվել է 60 ամիս, տարեկան 13.54% տոկոսադրույքով: Ֆինանսական վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո սեփականության իրավունքի փոխանցման վճարը վճարելուց հետո գույքն անցնում է Հիմնադրամի սեփականությանը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավտոմեքենայի հաշվեկշռային արժեքը 8,634 հազար դրամ է (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,834 հազար դրամ):

## 10 Հետաձգված հարկային պարտավորություններ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 38,245 | 46,876 |
| Տարվա արդյունքում ճանաչված փոխհատուցում | (3,315) | (8,631) |
| Տարեվերջի մնացորդ | 34,930 | 38,245 |

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 1 հունվարի 2021թ. | Տարվա արդյունքում ճանաչված փոփոխություն | 31 դեկտեմբերի 2021թ. |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 4,804 | 1,289 | 6,093 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 6,095 | 1,263 | 7,358 |
| | 10,899 | 2,552 | 13,451 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | |
| Հիմնական միջոցներ | 49,144 | (763) | 48,381 |
| | 49,144 | (763) | 48,381 |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ | (38,245) | 3,315 | (34,930) |

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

| Հազար դրամ | 1 հունվարի 2020թ. | Տարվա արդյունքում ճանաչված փոփոխություն | 31 դեկտեմբերի 2020թ. |
|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,288 | 3,516 | 4,804 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 3,465 | 2,630 | 6,095 |
| | 4,753 | 6,146 | 10,899 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | |
| Հիմնական միջոցներ | 51,629 | (2,485) | 49,144 |
| | 51,629 | (2,485) | 49,144 |
| Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ | (46,876) | 8,631 | (38,245) |

## 11 Ակտիվներին վերաբերող շնորհներ

| Հազար դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 40,770 | 33,224 |
| Տարվա ընթացքում ստացված | 59,632 | 13,442 |
| Տարվա ընթացքում եկամուտ ճանաչված | (27,927) | (5,896) |
| Տարեվերջի մնացորդ | 72,475 | 40,770 |

## 12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր շահառուներին | 88,419 | 175,561 |
| Պարտավորություններ աշխատակիցներին | 49,484 | 34,863 |
| Կրեդիտորական պարտքեր մատակարարներին | 13,171 | 6,930 |
| Վճարվելիք հարկեր և պարտավորություններ | 20,533 | 626 |
| Այլ | 23,945 | 427 |
| | 195,552 | 218,407 |

Կրեդիտորական պարտքերը շահառուներին իրենից ներկայացնում է Erasmus+ ծրագրի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովից ստացված գումարը, որը Հիմնադրամը որպես կոորդինատոր պետք է փոխանցի շահառուներին: Ծրագրի նպատակն է լավացնել շրջանավարտների աշխատունակությունը՝ Հայաստանի և Մոլդովիայի բարձրագույն կրթական համակարգերում ներմուծելով աշխատանքի հիման վրա սովորելը: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2024թ. հունվարին:

## 13 Հետաձգված եկամուտ

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ուսանողներից ստացված կանխավճարներ | 123,991 | 77,465 |
| Շնորհներ ուսման վճարների գծով | 34,728 | 28,167 |
| Այլ նպատակներով ստացված շնորհներ | 11,829 | 95,517 |
| | 170,548 | 201,149 |

2021թ. այլ նպատակներով ստացված շնորհներն իրենցից ներկայացնում են ծանոթագրություն 12-ում նկարագրված Erasmus+ ծրագրի շրջանակներում ստացված շնորհի՝ Հիմնադրամի մասնաբաժինը:

Հետաձգված եկամտի շարժը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 201,149 | 85,951 |
| Ստացված կանխավճարներ ուսանողներից | 124,463 | 78,621 |
| Ստացված շնորհներ | 272,393 | 314,521 |
| Տարվա ընթացքում եկամուտ ճանաչված | (427,457) | (277,944) |
| Տարեվերջի մնացորդ | 170,548 | 201,149 |

Հաշվետու տարվա ընթացքում ստացված շնորհները ըստ շնորհատուների ներկայացված են ստորև.

| Հազար դրամ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|
| ՀՀ Կառավարություն | 108,594 | 63,676 |
| «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» | 47,587 | 11,577 |
| Ֆրանսիայի Արտաքին Գործերի նախարարություն | 41,139 | 58,432 |
| «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» | 6,423 | 15,780 |
| Այլ | 68,650 | 165,056 |
| | 272,393 | 314,521 |

## 14 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջացել է շենքի վերագնահատման արդյունքում: Վերագնահատման պահուստը հաշվեգրվում է կուտակված շահույթին ակտիվի օգտագործմանը զուգընթաց՝ դրա սկզբնական արժեքի և վերագնահատված գումարի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությամբ: Վերագնահատված ակտիվի հետագա օտարման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում մնացած վերագնահատումից արժեքի աճը նույնպես հաշվեգրվում է կուտակված շահույթին: Վերագնահատման պահուստը ներկայացված է զուտ ակտիվներում համապատասխան հարկերից զուտ:

## 15 Հասույթ կրթական ծառայություններից

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Հասույթ պայմանագրերից* | | |
| Ուսանողներից ստացված ուսման վճարներ | 1,009,037 | 799,536 |
| Շնորհների գումարներից մարված ուսման վճարներ | 255,411 | 194,096 |
| Այլ վճարներ | 6,852 | 5,169 |
| | 1,271,300 | 998,801 |

Հիմնադրամի կրթական ծառայություններից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում:

## 16 Այլ ծախսեր

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Գովազդ | 29,582 | 7,073 |
| Փոստի և հաղորդակցման ծախսեր | 22,132 | 20,818 |
| Աուդիտի և խորհրդատվության ծախսեր | 21,717 | 6,720 |
| Կրթաթոշակների գծով ծախսեր | 16,881 | 34,705 |
| Անձնակազմի սննդի կազմակերպման ծախսեր | 15,702 | 12,458 |
| Անվտանգության ծախսեր | 14,833 | 14,672 |
| Ընթացիկ վերանորոգման, սպասարկման և այլ ծախսեր | 13,731 | 39,839 |
| Այլ ծախսեր | 77,710 | 87,309 |
| | 212,288 | 223,594 |

Ընթացիկ վերանորոգման, սպասարկման և այլ ծախսերն իրենցից ներկայացնում են ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ գործունեության շրջանակներում ՊՈԱԿ-ի շենքի համատեղ օգտագործման տարածքների ընթացիկ վերանորոգման, սպասարկան և այլ ծախսերը (տես ծանոթագրություն 1):

## 17 Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից (վնաս)/օգուտ, զուտ

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ | (17,802) | 12,956 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ | 5,915 | (1,019) |
| | (11,887) | 11,937 |

## 18 Շահութահարկի գծով ծախս

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | 33,539 | 23,948 |
| Հետաձգված հարկ | (3,315) | (8,631) |
| | 30,224 | 15,317 |

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների) | 76,209 | | 99,999 | |
| Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2020թ.՝ 18%) | 13,718 | 18.00 | 18,000 | 18.00 |
| (Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ | 16,506 | 21.66 | (2,683) | (2.68) |
| Շահութահարկի գծով ծախս | 30,224 | 39.66 | 15,317 | 15.32 |

## 19 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի դեմ: Արևմտյան ուժերը քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանը Հայաստանի գլխավոր առևտրատնտեսական գործընկերն է, ուստի ներկայումս կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման: Հիմնադրամի վրա հիմնական ազդեցություններից մի քանիսը կարող են ներառել աշխատակազմի հասանելիության սահմանափակումը, ճանապարհորդության սահմանափակումը, ֆինանսավորում ստանալու անկարողությունը և այլն: Այնուամենայնիվ կոնկրետ ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, և ղեկավարությունը դեռ չի գնահատել ընթացիկ ֆինանսական հաշվետվությունների վրա վերոնշյալի ազդեցությունը:

## 20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 20.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ

ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ*

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում  այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

*Համատեղ գործունեության հաշվառումը*

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, Հիմնադրամը ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ համաձայնագիր է կնքել՝ գիտական հետազոտությունների և նախագծերի իրականացման, կիրառական և նորարարական ունակություններ ունեցող երիտասարդ մասնագետների պատրաստման, հայ–ֆրանսիական գիտաուսումնական կապերի զարգացման նպատակով համատեղ ծրագրեր իրականացնելու:

Գնահատելիս, թե արդյոք վերոնշյալ համատեղ պայմանավորվածությունը համատեղ գործունեություն է, թե համատեղ ձեռնարկում, Հիմնադրամը կիրառում է դատողություն: Հիմնադրամը գնահատում է իր իրավունքներն ու պարտականությունները՝ դիտարկելով պայմանավորվածության կառուցվածքը և իրավական ձևը, պայմանագրային պայմանավորվածությունում կողմերի միջև համաձայնեցված պայմանները, և, երբ տեղին է, այլ փաստեր և հանգամանքներ:

Դատողությունն անհրաժեշտ է նաև որոշելու, թե արդյոք պայմանավորվածությունը համատեղ կառավարում են երկու կողմերը:

Հիմնադրամը եզրակացրել է, որ վերոնշյալ պայմանավորվածությունը համատեղ գործունեություն է, հետևաբար ներառվում է ՖՀՄՍ 11-ի շրջանակներում: Հետևաբար, Հիմնադրամը ճանաչում է համատեղ գործունեությունում իր մասնակցության հետ կապված բոլոր ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը:

*«Մերկատոր – մարքետինգի տեսություն և պրակտիկա» գրքի հայերեն տարբերակի վրա կատարված ծախսերի ճանաչում*

Ղեկավարության գնահատմամբ, 2022թ. ընթացքում Հիմնադրամը կհրատարակի «Մերկատոր – մարքետինգի տեսություն և պրակտիկա» գրքի հայերեն տարբերակը և կստանա տնտեսական օգուտներ գրքի հայերեն տարբերակի իրացումից: Ղեկավարության գնահատման հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ Հիմնադրամը կունենա բավարար լրացուցիչ ֆինանսավորում՝ գրքի հետագա հրատարակումն ու իրացումն ապահովելու համար: Այնուամենայնիվ, նման ֆինանսավորում չստանալու պարագայում կառաջանա Հիմնադրամի ոչ նյութական ակտիվները արժեզրկելու անհրաժեշտություն:

# 21 Ֆինանսական գործիքներ

## 21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների

մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

## 21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

*Ֆինանսական ակտիվներ*

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ* | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 46,076 | 41,490 |
| Ժամկետային ավանդներ | 108,522 | 256,444 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 31,561 | 73,200 |
| Ընդամենը ֆինանսական ակտիվներ | 186,159 | 371,134 |

*Ֆինանսական պարտավորություններ*

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ* | | |
| Ֆինանսական վարձակալության պայմանագրի գծով պարտավորություն | 8,377 | 9,900 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 175,019 | 217,781 |
| | 183,396 | 227,681 |

# 22 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ ներդնելու, ինչպես նաև ռիսկերի կառավարման քաղաքականություն մշակելու համար: Այդ համակարգն ու քաղաքականությունը կանոնավոր կերպով վերանայվում են ղեկավարության կողմից՝ շուկայում տեղի ունեցող փոփոխությունները հաշվի առնելու նկատառումով:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

## Ֆինանսական ռիսկի գործոններ

*ա)* *Շուկայական ռիսկ*

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

*Արտարժութային ռիսկ*

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ կրթական ծրագրերի շրջանակներում ստացված գումարներից, որոնք ի սկզբանե արտահայտված են եվրոյով:

Եվրոյով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

| Հոդված<br>Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | | |
| Ժամկետային ավանդներ | 108,522 | 256,444 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 19,497 | 51,822 |
| | 128,019 | 308,266 |
| *Ֆինանսական պարտավորություններ* | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 101,952 | 175,561 |
| | 101,952 | 175,561 |
| Զուտ արդյունք | 26,067 | 132,705 |

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ եվրոյի նկատմամբ դրամի 10% (2020թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2020թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2020թ.՝ 10%):

Դրամի արժևորումը եվրոյի նկատմամբ 10%-ով (2020թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

| Հազար դրամ | Եվրոյի ազդեցություն | |
|---|---|---|
| | 2021թ. | 2020թ. |
| Տարվա արդյունք | (2,607) | (13,270) |

*բ)* *Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և ժամկետային ավանդները:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

| Հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ | | |
| Դեբիտորական պարտքեր | 46,076 | 41,490 |
| Ժամկետային ավանդներ | 108,522 | 256,444 |
| Մնացորդներ բանկերում | 31,117 | 73,196 |
| | 185,715 | 371,130 |

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է վերջիններս տարբեր բանկերում պահելու միջոցով, ինչպես նաև բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

*Դեբիտորական պարտքեր*

Կրթական ծառայությունների դիմաց ուսանողները վճարում են հիմնականում կանխավճարներ՝ նվազեցնելով պարտքային ռիսկը:

Հիմնադրամը բոլոր դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2021թ. դեկտեմբերի 31-ին նախորդող 12 ամսվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները:

Երբ հավանական չէ դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք պահուստավորվում են, ապա դուրս են գրվում (ապաճանաչվում են): Ծառայությունների մատուցման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում վճարում չկատարելը և Հիմնադրամի հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

| 2021թ. | Անտոկոս | Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով | Ընդամենը |
|---|---|---|---|
| Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք | | 13.54% | |
| Մինչև 6 ամիս | 160,174 | 1,340 | 161,514 |
| 6 ամսից մինչև 1 տարի | 14,845 | 1,350 | 16,195 |
| Ավելի քան 1 տարուց ավել | - | 8,100 | 8,100 |
| | 175,019 | 10,790 | 185,809 |

| 2020թ. | Անտոկոս | Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով | Ընդամենը |
|---|---|---|---|
| Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք | | 13.54% | |
| Մինչև 6 ամիս | 17,816 | 1,350 | 19,166 |
| 6 ամսից մինչև 1 տարի | 199,965 | 1,350 | 201,315 |
| Ավելի քան 1 տարուց ավել | - | 10,800 | 10,800 |
| | 217,781 | 13,500 | 231,281 |

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, ժամկետային ավանդները և դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները, ժամկետային ավանդները և դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

## 23 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

## 23.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Հիմնադրամի հողը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են` հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում: Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Իրական արժեքը գնահատվել է` օգտագործելով եկամտի և ծախսային մոտեցումները: Եկամուտների ուղղակի կապիտալավերածման մեթոդով շուկայական արժեքը որոշվում է անշարժ գույքի եկամուտ բերելու կարողությամբ: Եկամտաբերության մեթոդի շրջանակներում օգտագործվում են եկամտի կապիտալավերածման և/(կամ) դրամական հոսքերի դիսկոնտավորման եղանակները: Եկամտի մոտեցումը կապիտալացնում է գնահատված վարձակալական եկամտի հոսքը՝ հանած պլանավորված գործառնական ծախսերը` օգտագործելով շուկայական եկամտաբերությունից ստացված զեղչման տոկոսադրույքը, որը որոշվում է՝ ելնելով նմանատիպ գույքի հետ կապված վերջին գործարքներից: Գնահատված վարձակալական եկամտի հոսքը դիտարկելիս հաշվի են առնվում շենքի՝ զբաղեցված լինելու ներկայիս մակարդակը, չզբաղեցված տարածքների ապագա մակարդակի գնահատումները, վարձակալության ժամկետները և շենքի մնացորդային տնտեսական ծառայության ընթացքում ապագա վարձակալություններից ակնկալվող վարձակալական եկամուտները:

Ծախսային մեթոդով հաշվարկելիս շուկայական  արժեքը որոշվել է՝ հիմնվելով նման ակտիվի կառուցման համար անհրաժեշտ ընդհանուր ծախսերի վրա՝ հանած գնահատված մաշվածությունը, որը ներառում է գնահատման ամսաթվի դրությամբ ֆիզիկական, տնտեսական և ֆունկցիոնալ մաշվածությունները:

Ամենանշանակալի ելակետային տվյալները, որոնցից բոլորն էլ ոչ դիտելի են, իրենցից ներկայացնում են գնահատված վարձակալական արժեքը, չզբաղեցված տարածքների մակարդակի վերաբերյալ ենթադրությունները, զեղչման տոկոսադրույքը, ինչպես նաև անհրաժեշտ ծախսումների գումարը, ենթադրվող օգտակար ծառայության ժամկետը:

## 24 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Հիմնադրամի՝ ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններում փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

| Հազար դրամ | Երկարաժամկետ ֆինանսական վարձակալության պայմանագրի գծով պարտավորություն | Կարճաժամկետ ֆինանսական վարձակալության պայմանագրի գծով պարտավորություն | Ընդամենը |
|---|---|---|---|
| 2021թ. հունվարի 1-ի դրությամբ | 8,387 | 1,513 | 9,900 |
| *Դրամային հոսքերից* | | | |
| Մարումներ | - | (2,710) | (2,710) |
| *Ոչ դրամային հոսքերից* | | | |
| Տոկոսի հաշվեգրում | - | 1,187 | 1,187 |
| Վերադասակարգում | (1,710) | 1,710 | - |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,677 | 1,700 | 8,377 |

| Հազար դրամ | Երկարաժամկետ ֆինանսական վարձակալության պայմանագրի գծով պարտավորություն | Կարճաժամկետ ֆինանսական վարձակալության պայմանագրի գծով պարտավորություն | Ընդամենը |
|---|---|---|---|
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | - | - | - |
| *Ոչ դրամային հոսքերից* | | | |
| Ստացված | 9,900 | - | 9,900 |
| Վերադասակարգում | (1,513) | 1,513 | - |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 8,387 | 1,513 | 9,900 |

## 25 Պայմանականություններ

### 25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## 25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

## 25.3 Դատական գործեր

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 4-ում, Հիմնադրամի հիմնական միջոցներում հաշվառվում է առաջին հարկում գտնվող կոնֆերանս դահլիճի տարածքը: Այս տարածքի ձեռք բերման համար Հիմնադրամը «Սթրոք» Եվրոպական բժշկական կենտրոն ՍՊԸ-ին վճարել էր 28,200 հազար դրամ՝ համաձայն 2009թ. օգոստոսի 1-ին Հիմնադրամի և «Սթրոք» Եվրոպական բժշկական կենտրոն ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի: Ըստ կնքված պայմանագրի պայմանների՝ «Սթրոք» Եվրոպական բժշկական կենտրոն ՍՊԸ-ն պետք է Հիմնադրամին փոխանցեր տարածքի սեփականության իրավունքը, սակայն սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ նշված տարածքի սեփականության իրավունքը չէր փոխանցվել Հիմնադրամին: Վերը նշված պայմանագիրը անվավեր ճանաչելու վերաբերյալ «Սթրոք» Եվրոպական բժշկական կենտրոն ՍՊԸ կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան: Դատական վճիռը հօգուտ Հիմնադրամի կայացվել է 2016թ. մարտին, համաձայն որի՝ նշված շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետք է փոխանցվեր Հիմնադրամին: 2016թ. ընթացքում «Սթրոք» Եվրոպական բժշկական կենտրոն ՍՊԸ-ն (ներկայումս «Եվրոլայն» ՍՊԸ) դիմել է վերաքննիչ դատարան նախկին որոշումը անվավեր ճանաչելու հայցով: Վերաքննիչ դատարանը հայցը բավարարվել է հօգուտ «Եվրոլայն» ՍՊԸ-ի:

Այնուհետև Հիմնադրամը բողոք է ներկայացրել վճռաբեկ դատարան: Հիմնադրամի վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը և գործն ուղարկվել է վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Սույն ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում որևիցէ պարտավորություն, որը կարող է առաջանալ, եթե վճիռը կայացվի ի վնաս Հիմնադրամին, քանի որ Հիմնադրամի ղեկավարության համոզմամբ որոշումը կկայացվի հօգուտ վերջինիս:

# 26 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, որոնց ցանկը ներկայացված է էջ 6-ում, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

| Հազար դրամ<br><br>Գործարքներ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Հոգաբարձուների խորհրդի անդամներ* | | |
| Շնորհների ստացում | 149,733 | 122,107 |
| Շնորհներից եկամտի ճանաչում | 171,970 | 105,670 |
| Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում | 9,146 | 1,395 |
| | | |
| *Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ* | | |
| Ապրանքների և ծառայությունների ձեռք բերում | 19,256 | 11,545 |
| | | |
| *Ղեկավարություն* | | |
| Աշխատավարձ և պարգևատրումներ | 55,163 | 37,023 |

| Հազար դրամ<br><br>Մնացորդներ | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Հոգաբարձուների խորհրդի անդամներ* | | |
| Հետաձգված եկամուտ | 1,977 | 23,686 |
| | | |
| *Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ* | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 500 | - |
| | | |
| *Ղեկավարություն* | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 3,327 | 2,973 |

# Հավելված 1

## Աշխատակազմում ընդգրկված անձանց անուն,ազգանուն

| Հ/Հ | Անվանում | | |
|---|---|---|---|
| 1 | Աբգարյան Անիդա Պերճի | 45 | Բոստանջյան Արմինե |
| 2 | Աբրահամյան Աննա | 46 | Բուղդարյան Աննա Ալեքսանդրի |
| 3 | Աբրահամյան Վարթ Արարատի | 47 | Գաբրիելյան Լիլիթ |
| 4 | Ազարյան Աննա | 48 | Գալիչյան Արամայիս |
| 5 | Ազարյան Նաիրա Գառնիկի | 49 | Գալոյան Ժորա |
| 6 | Աթանեսյան Անի | 50 | Գալստյան Ամալյա |
| 7 | Ալեքսանյան Նարինե Սանասարի | 51 | Գասպարյան Աբրահամ Գևորգի |
| 8 | Ալիխանյան Սուսաննա Կառլենի | 52 | Գասպարյան Անաիդա Լևոնի |
| 9 | Աղաբաբյան Հրանուշ Սուրենի | 53 | Գասպարյան Անահիտ Ռուբենի |
| 10 | Աղազարյան Անաստաս Արսենի | 54 | Գասպարյան Դավիթ Մկրտիչի |
| 11 | Աղաջանյան Գագիկ | 55 | Գևորգյան Եղսիկ |
| 12 | Այվազյան Արսեն Վոլոդյայի | 56 | Գևորգյան Իռեն Վարդանի |
| 13 | Այվազյան Գագիկ Լևոնի | 57 | Գևորգյան Հուսիկ |
| 14 | Աշիկյան Նվարդ Աշոտի | 58 | Գևորգյան Մարիամ |
| 15 | Առաքելյան Հակոբ Գևորգի | 59 | Գևորգյան Նաիրա Ռուդոլֆի |
| 16 | Առաքելյան Նելլի Արմենի | 60 | Գևորգյան Նարինե |
| 17 | Ասատրյան Հունան Արամայիսի | 61 | Գյուլգյուլյան Աննա Գևորգի |
| 18 | Ասլանյան Ագապի | 62 | Գյուլգյուլյան Էլիզա |
| 19 | Ասլանյան Մերի | 63 | Գյուլխասյան Գոռ Արամի |
| 20 | Ավագյան Գարիկ Կարոյի | 64 | Գյուլխասյան Լենա |
| 21 | Ավդալյան Մարգարիտ | 65 | Գրիգորյան Անի Ցոլակի |
| 22 | Ավետիկյան Խաչիկ | 66 | Գրիգորյան Արամայիս |
| 23 | Ավետիսյան Չարինե | 67 | Գրիգորյան Արթուր |
| 24 | Ավետիսյան Լիլյա Ալբերտի | 68 | Գրիգորյան Արման |
| 25 | Ավետիքյան Վարուժան | 69 | Գրիգորյան Արման Արայիկի |
| 26 | Արզումանյան Տիգրան Հայկազի | 70 | Գրիգորյան Էլեն Պետրոսի |
| 27 | Արշակյան Անի Արաիկի | 71 | Գրիգորյան Հրանտ Նիկոլայի |
| 28 | Արշակյան Մարիամ | 72 | Գրիգորյան Նարինե Ռոբերտի |
| 29 |Ափյան Նաիրա Միքայելի | 73 | Գրիգորյան Սոս |
| 30 | Ափոյան Ռուզան Գասպարի | 74 | Գրիգորյան Տաթևիկ Սամվելի |
| 31 | Բաբայան Արմինե | 75 | Դանիելյան Գևորգ |
| 32 | Բաբայան Հայկ Գարեգինի | 76 | Դաշտոյան Արման |
| 33 | Բաբայան Մարինե Ժորայի | 77 | Դավթյան Արսիկ |
| 34 | Բաբաջանյան Լևոն Գառնիկի | 78 | Դարբինյան Ալբերտ |
| 35 | Բաբաջանյան Միսակ Մուշեղի | 79 | Դեմիրճյան Սոսի |
| 36 | Բագոյան Եղիշե Իշխանի | 80 | Դիլանյան Լիլիա Աշոտի |
| 37 | Բալաբանյան Լիանա Կարապետի | 81 | Դուդուկչյան Ինգա |
| 38 | Բալասան Ավանեսյան Աիդա | 82 | Դրմեյան Նունե |
| 39 | Բաղդասարյան Արմեն | 83 | Եղիազարյան Կարեն Միշայի |
| 40 | Բաղդասարյան Գևորգ Սուրենի | 84 | Ենգիբարյան Ռաֆայել |
| 41 | Բաղդասարյան Սոնա | 85 | Եսայան Արամ Օնիկի |
| 42 | Բաղրամյան Ռուզաննա | 86 | Երեմյան Աստղիկ Լևոնի |
| 43 | Բարիկյան Գուրգեն Գրիգորի | 87 | Երեմյան Գագիկ |

| | | | |
|---|---|---|---|
| 44 | Բելուբեկյան Իրինա | 88 | Երեմյան Սոսե |

| | | | |
|---|---|---|---|
| 89 | Եփրեմյան Միհրան Սարգսի | 133 | Հարությունյան Ավետիս Հմայակի |
| 90 | Զեյթունցյան Զարմինե | 134 | Հարությունյան Արթուր Սարոյի |
| 91 | Էլարյան Ելենա | 135 | Հարությունյան Արուսյակ Աշոտի |
| 92 | Թադևոսյան Ռոբերտ | 136 | Հարությունյան Բագրատ Միխաիլի |
| 93 | Թամազյան Անդրանիկ | 137 | Հարությունյան Գայանե Սամվելի |
| 94 | Թամոյան Նարե Նորիկի | 138 | Հարությունյան Գայանե Սոսի |
| 95 | Թոսունյան Աշխեն Ռուբիկի | 139 | Հարությունյան Հայկ Արմենի |
| 96 | Թորոսյան Գոռ Գագիկի | 140 | Հարությունյան Հրանտ Զավենի |
| 97 | Իսկոյան Աիդա | 141 | Հարությունյան Մարիամ |
| 98 | Խալափյան Լիլիթ | 142 | Հարությունյան Օլյա |
| 99 | Խանվելյան Նագիկ Կոլյայի | 143 | Հովակիմյան Գագիկ Անուշավանի |
| 100 | Խաչատուրյան Ալեքսանդր Սերգեյի | 144 | Հովեյան Մարետա Վազգենի |
| 101 | Խաչատրյան Արթուր Լեվոնի | 145 | Հովհաննիսյան Անի Արսենի |
| 102 | Խաչատրյան Արտակ Համլետի | 146 | Հովհաննիսյան Աննա |
| 103 | Խաչատրյան Կարինե | 147 | Հովհաննիսյան Լուսինե |
| 104 | Խաչատրյան Հասմիկ | 148 | Հովհաննիսյան Հովհաննես Օնիկի |
| 105 | Խաչատրյան Մխիթար | 149 | Հովսեփյան Սոսիկ |
| 106 | Խիթարյան Գևորգ | 150 | Հրաչյան Գայանե Գագիկի |
| 107 | Խլղաթյան Սոնա | 151 | Ղազանչյան Լիդա Առնակի |
| 108 | Խոջայան Նարինե | 152 | Ղազարյան Անահիտ Լեվոնի |
| 109 | Կարապետյան Անրիետա | 153 | Ղազարյան Լիլիթ Աշոտի |
| 110 | Կարապետյան Աստղիկ Մուշեղի | 154 | Ղազարյան Հասմիկ Արծրունի |
| 111 | Կարապետյան Արփի Ռուբենի | 155 | Ղազարյան Մարինե Լավրենտի |
| 112 | Կարապետյան Տաթևիկ | 156 | Ղալաչյան Գոհար |
| 113 | Կոխտիևվա Նարինե Ավետիսի | 157 | Ղամբարյան Արթուր Սիրեկանի |
| 114 | Կույումջյան Գայանե Կարապետի | 158 | Ղարիբյան Տաթևիկ Գալուստի |
| 115 | Հախվերդյան Լևոն | 159 | Ճաղարյան Գագիկ Հրանտի |
| 116 | Հակոբյան Գագիկ Պետրոսի | 160 | Մաթևոսյան Արամ Գագիկի |
| 117 | Հակոբյան Գայանե Հովսեփի | 161 | Մալերյան Սվետլաննա |
| 118 | Հակոբյան Լիանա | 162 | Մախմուդյան Ռուստամ Ջասմի |
| 119 | Հակոբյան Կարինե Արմենակի | 163 | Մակարյան Անի Մարատի |
| 120 | Հակոբյան Հասմիկ Կառլենի | 164 | Մամիկոնյան Մարգարիտ Մամիկոնի |
| 121 | Հակոբյան Մարիամ Արայիկի | 165 | Մանասարյան Զարուհի |
| 122 | Հակոբյան Սոնա | 166 | Մանասյան Արփինե Նորայրի |
| 123 | Համբարձումյան Լուսիա | 167 | Մանասյան Մարիամ Մնացականի |
| 124 | Համբարձումյան Կարեն Վաչիկի | 168 | Մանուկյան Ազատ Արմենի |
| 125 | Համբարձումյան Հրանուշ Գուրգենի | 169 | Մանուկյան Ղուկաս |
| 126 | Հայթայան Սոֆի | 170 | Մանուկյան Մարինե |
| 127 | Հայրապետյան Աննա | 171 | Մանուկյան Մարինե Հայկասարի |
| 128 | Հայրապետյան Նաիրա Ծմավոնի | 172 | Մանուկյան Նարինե Հայկասարի |
| 129 | Հայրապետյան Ջոն Հակոբի | 173 | Մանուկյան Ռոզա |
| 130 | Հայրումյան Սևակ Գագիկի | 174 | Մանուչարյան Արամ |
| 131 | Հարոյան Զավեն Ռուդիկի | 175 | Մարգարյան Ինեսսա |
| 132 | Հարությունյան Ալեքսանդր | 176 | Մարգարյան Մարինե |

| | | | |
|---|---|---|---|
| 177 | Մարգարյան Նաիրա Մայիսի | 221 | Նաջարյան Տաթևիկ |
| 178 | Մարդոյան Ստելա Գագիկի | 222 | Նավոյան Արայիկ |
| 179 | Մարության Սերգեյ | 223 | Նեմիշալյան Էմմա Կարապետի |
| 180 | Մարտիկյան Տիգրանուհի | 224 | Ներսեսյան Կարեն |
| 181 | Մարտիրոսյան Էրիկ Զավենի | 225 | Նիկողոսյան Արսեն Սերժիկի |
| 182 | Մարտիրոսյան Թամարա | 226 | Նիկողոսյան Եվգենյա |
| 183 | Մարտիրոսյան Կառլեն | 227 | Շահինյան Արմեն Վիլհեմի |
| 184 | Մարտիրոսյան Կարեն | 228 | Շահնազարյան Նարե |
| 185 | Մարտիրոսյան Քրիստինե Լեվոնի | 229 | Շահումյան Սիրանուշ |
| 186 | Մելիքյան Լեյլի | 230 | Շահպարոնյան Մարինե |
| 187 | Մելիք-Օհանջանյան Յուրի | 231 | Շաքարյան Թամարա |
| 188 | Մեհրաբյան Մինաս Ավետիքի | 232 | Չավուշյան Կարինե Էմիլի |
| 189 | Մեյրոյան Աստղիկ Ռազմիկի | 233 | Չիլինգարյան Աճարոն Հարությունի |
| 190 | Մեյրոյան Վաղարշակ | 234 | Չիլինգարյան Անի Կարենի |
| 191 | Մեսրոպյան Վասիլ | 235 | Չոբանյան Գրիգոր |
| 192 | Մինասյան Իրինա Ալբերտի | 236 | Պապոյան Արփենիկ |
| 193 | Մինասյան Լուսինե Պետիկի | 237 | Պատվականյան Մարինե Սիմոնի |
| 194 | Միրզոյան Աննա Արմենի | 238 | Պետրոսյան Աշոտ |
| 195 | Միրզոյան Գրիգոր | 239 | Պետրոսյան Արսեն Լյուդվիգի |
| 196 | Միքայելյան Կարեն Գուրգենի | 240 | Պետրոսյան Գոհար Արմենի |
| 197 | Մխեյան Դանիել Մերուժանի | 241 | Պետրոսյան Գոհարիկ Ռազմիկի |
| 198 | Մկրտչյան Արմինե Սամվելի | 242 | Պետրոսյան Էմմա Գրիգորի |
| 199 | Մկրտչյան Դիանա Արամի | 243 | Պետրոսյան Կարեն |
| 200 | Մկրտչյան Նենսի | 244 | Պետրոսյան Շուշանիկ Հովհաննեսի |
| 201 | Մոմջյան Մելքոն Մամփրեյի | 245 | Պողոսյան Աշոտ |
| 202 | Մովսիսյան Այա Էդիկի | 246 | Պողոսյան Իրինա |
| 203 | Մուսելիմյան Լիլիթ Արտաշի | 247 | Պողոսյան Սյուզաննա Հրաչի |
| 204 | Մուրադյան Եվգենիա | 248 | Ջուլֆայան Ռուզան Պողոսի |
| 205 | Մուրադյան Մանուկ | 249 | Սահակյան Արմինե |
| 206 | Մուրադյան Մելինե Հրաչյայի | 250 | Սահակյան Գոհար Զավենի |
| 207 | Մուրադյան Վիկտոր | 251 | Սահակյան Հասմիկ |
| 208 | Յանդյան Երանուհի | 252 | Սահակյան Նանե Գառնիկի |
| 209 | Յովսէփեան Կարին | 253 | Սահակյան Նելլի Նավասարդի |
| 210 | Յուզբաշյան Գոհարիկ | 254 | Սահակյան Ռուզաննա |
| 211 | Յուզբաշյան Սամվել Սեյրանի | 255 | Սահակյան Սոնա |
| 212 | Նազանյան Արգամ Լեվոնի | 256 | Սամվելյան Աննա Վահրամի |
| 213 | Նազարեթյան Միհրան | 257 | Սարգսյան Անուշ |
| 214 | Նազարյան Արտյոմ Սարգսի | 258 | Սարգսյան Արմենուհի Սեյրանի |
| 215 | Նազինյան Ռուբիկ | 259 | Սարգսյան Գոհար Կարենի |
| 216 | Նալյան Լիլիթ Աշոտի | 260 | Սարգսյան Գոհար Հայկի |
| 217 | Նահապետյան Աննա Լադիկի | 261 | Սարգսյան Լուսինե |
| 218 | Նանյան Արփինե | 262 | Սարգսյան Կարեն |
| 219 | Նաջարյան Մերի | 263 | Սարգսյան Նորա Վաչագանի |
| 220 | Նաջարյան Սպարտակ | 264 | Սարգսյան Սեյրան Սամվելի |

| | |
|---|---|
| 265 | Սարգսյան Քրիստինա Ռոբերտի |
| 266 | Սարգսյան Քրիստինե Գագիկի |
| 267 | Սարդարյան Սոնա |
| 268 | Սարոյան Կոնստանտին Ռաֆիկի |
| 269 | Սաֆարյան Տիգրան Վլադիմիրի |
| 270 | Սիմոնյան Սիմոն |
| 271 | Սողոմոնյան Զարուհի Ռաֆիկի |
| 272 | Սողոմոնյան Կարինա Կարենի |
| 273 | Ստեփանյան Ալիկ Հենրիկի |
| 274 | Ստեփանյան Արմինե |
| 275 | Ստեփանյան Արփինե Լյովայի |
| 276 | Ստեփանյան Մարտուն |
| 277 | Ստեփանյան Նունե |
| 278 | Ստեփանյան Վարդան Սաղաթելի |
| 279 | Վարդանյան Գայանե Նորիկի |
| 280 | Վարդանյան Նունե |
| 281 | Վարդանյան Վարուժան |
| 282 | Վարդիկյան Վարդուհի |
| 283 | Վարշամյան Լուսինե Արամայիսի |
| 284 | Վարոսյան Նունե Խաչիկի |
| 285 | Վարտիկյան Ղուկաս |
| 286 | Վարտիկյան Վարուժան |
| 287 | Վենգրժանովիչ Մերի Ռոբերտի |
| 288 | Վերդյան Լիլիա Զորիկի |
| 289 | Վերլինսկի Սերգեյ |
| 290 | Տեր-Ղազարյան Աիդա Կոնստանտինի |
| 291 | Ցոլակյան Նադեժդա |
| 292 | Քոսյան Սերգեյ Սամվելի |
| 293 | Օրդուխանյան Ռուզան Արսենի |
| 294 | Ֆահրադյան Հարություն |

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.06.2023 10:43